

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկա 712 . . Տր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Տր.


Վեցամսեայ . . . 7 «

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տրար
Վեցամսեայ 1.50 «

ԿԱՆԵԻԿ

Դրանոցման տողը
20 տանիքով



ԼՐԱՓԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՅԷ

Redaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иправункъ

ВАРНА

Գրողները եւ տպոյթը

ԻՆՉԿԸ ՆՇԱՆԱԿԷ

Խանութի, Օմմ. պանդայի
և դեռ ուրիշ մէկ քանի անխորհուրդ
հուրդ և անոյժ գործողութիւն-
ներով Վասպուրականը, Պօլիսը,
Տրապիզոնը և դեռ քանի քանի
գաւառներ արեան դաշտի և ա-
ւերակի վերածելու համար Սուլ-
թանին առիթ և ապարէզ ըն-
ծալով լուրսակին մէջ Սադայէի
դեր կատարող և բիւրաւոր հայ
կեանքերու փճացման, հայ յի-
շատիւնական խաւքերու բաժան
բաժան լինելուն և խաչոր. զեղ-
ծութիւնն ու խաչագողութիւններ
գործուելուն հեղինակ—պատաս-
խանատուներէ մէկ, վարդօն,
կրկին ծանր հայհոյութիւններով
սկսած է հրապարակը աշտուել
և իրենցմէ դուրս գտնուող կու-
սակցութիւնները զրպարտել,
որպէս զի Միութեան համար
ձեռք առնուած միջոցները ա-
պարդիւն մնան և ինք իր ներ-
կայ դիրքէն և հացէն չը զըր-
կուի կարգ մը Գաշնակցականնե-
րու ապուշութեան մօտեցող միա-
մտութեանը շնորհիւ և Այս ամե-
նը յայտնի ճշմարտութիւն է որ
աւելի բացատրութեան չը կա-
րօտիր :

Իսկ գալով իր վերջին յօդուածա-
ձեռ գրելին, յայտնի դէպքեր
և իրողութիւններ խեղաթիւրե-
լուն ու ցած զրպարտութիւն-
ներուն, այդ մասին քանի մը տող
կուզեմ գրել :
Արտասահմանի միամիտները խա-
բելու և երկրի ժողովուրդին ա-
րիւնը գետի պէս հոսեցնելու մէջ
իրեն հաց փնտռող միմօր առջի
օր սա տողերը կը գրէր. «Առանց
յեղափոխականի լուրջ առիթներ
պատճառելուն, այս տարի դեռ
մնաւ մէջ Սուլթանը գաղանի
հրամաններով պատուիրեց իր
Հայաստանում գտնվող գլխաւոր
գորաբանակի հրամանատարին
միջոցներ ձեռք առնել գարնան
դէպի Սասուն արշաւելու :
Այդ գաղանի հրամանների հի-
ման վրայ զօրքերը լցվեցին
Սուլ գաւառը և տեղի ունեցան

Յունան գիւղի դէպքերը »
Ինքնարգարացումի այս ձեռը
որ ընթերցողը յիմարօրէն կը
կըլլէ արդեօք. Ո՞վ չի գիտեր
թէ եթէ Սուլթանը «այս տարի,
դեռ ձմրան մէջ » հրամաններ
տուաւ Սասուն արշաւելու, Դրո-
շակեան թերթերը երկու տարի
է իվեր արդէն սկսած էին «Սա-
սուն, Սասուն, դէպի Սասուն»
պուալ, ինքզինքնին գործի մէջ
ցոյց տալու յիմարութեանն բռ-
նուած, առանց հոգ ընելու
որ հրապարակային այդ բացա-
գանչութիւնները թուրք կա-
ռավարութիւնը արթնցնելով,
այդ գաւառի հոծ հայութիւնը ևս
ցրուել ու փճացնել տալու պի-
տի ծագէին :

Այդ յիմար բայց նպատակա-
ւոր պոռչուողներն էին որ Սուլ-
թանի կառավարութիւնը զգու-
շութեան թելադրեցին որ Սաս-
նոյ Մշոյ դիւղերուն մէջ նոր պա-
հականոցներ հաստատէ և Հա-
յոց շարժումներուն վրայ խտրի
հակէ : այդ պահակները և հըս-
կող զինուորներն էին որ մէկ
քանի օտարական Հայերու երե-
նակէն կասկածած խուզարկել,
պաշարել, յարձակիլ և վերջա-
պէս կոտորել սկսան «նպատրաստ
և անդէն հայ գիւղացին :

Դրոշակեաններու անխորհուրդ-
ընթացքը թուրք կառավարու-
թեան ոճրագործ ընթացքին
չափ զգուշի է յեղափոխական
լուրջ գործունէութեան տեսա-
կետով : վարդօն և իր նմաննե-
րը ի զուր կը ճգնին Դրոշակեա-
նութիւնը պատասխանատուութե-
նէ փրկել, ըսելով թէ Սուլթա-
նը «այս տարի, դեռ ձմրան մէջ,
հրաման տուաւ զօրքերուն Սա-
սուն արշաւելու : Բայց Դրոշակե-
ան «Ֆէտայիները, և զինակիր
խումբերը արդէն 2-3 օրքներէ
իվեր Սասուն արշաւել սկսած էին
ըստ Դրոշակեան թերթերու :

Այդ թերթերու գրածները եթէ
սուտ էին իրականին մէջ, կրկին
թիւրքը յոնցաւոր նկատելու է որ
Դրոշակեաններու գրածները
ճիշդ կարծեցիկ «այս տարի
ձմրան մէջ » պէտք եղածէն ա-

ւելի զինուորներ զրկեց Սասուն
հոն ամրացող և թագաւորութիւն
հռչակող ֆէտայիներու բանակը
նուաճելու համար : Անոնք հոն
չը գտնելով ծանուցուած
հայ բանակը, անպաշտպան
և անդէն գիւղացիները կոտորե-
ցին և դեռ այսօր այս գործը կը
շարունակուի. Սասունը և Մշոյ
դաշտը արեան մէջ կը լողան,
Վարդօն ալ գարեջուրի մէջ.
« Էլի հոս հոսներ ջարդվում են »
Անպատրաստ և անդէն վիճակի
մէջ, յանուն Սասնոյ հայ ժողո-
վուրդին, ապստամբական դրոշ-
պարդելու և Սասուն ապստամ-
բած » յայտարարելու Դրոշակե-
ան այս գաղափարները գործու-
նէութիւնը և անոր քսամունքի
հետեւանքները այսօր ճշիւ առջի
ունենալով մէկ տեղ, երբ առջի
օր կարդացի վառնայի Դրոշակե-
ան թերթին մէջ թէ Դաշնակ-
ցական կուսակցութիւնը մերժած
է վեր. Հնչակեան կեդրոնի երկ-
րի մէջ համեմատ զորքերու ա-
ռաջարկը, կարելի չեղաւ ինձ
կծու հայհոյութեամբ մը թերթը
մէկ կողմ չը նետել և չուզելով
այն կարծիքը չգոյացնել թէ այդ
մարդիկը մտքերնին դրած են
անպատճառ միժ Հայաստանը ա-
ռանց հայու ձգել ինչպէս որ կը
բաղձար սատկող Լօպատովը : Ինչ
կը նշանակէ դիմադրութեան
համար պէտք եղած ուժը չունե-
նալով հանդերձ թշնամին գի-
րագուել : Ինչ կը նշանակէ ուրիշ
համարապատակ հայ կուսակցու-
թեան մը գործակցութիւնը մերժել.
Ինչ կը նշանակէ օտար և հեռա-
ւոր Մակեդոնացիին հետ համե-
քաշութիւն յայտարարել և
ճիշդ գործի միջոցին ձեռնպահ
մնալ տկարութիւն պատրուակե-
լով : Ինչ կը նշանակէ ամենանեղ
օրերու մէջ իր եղբոր աջակցու-
թիւնը և ժամագրութիւնը չըն-
դունիլ : Ինչ կը նշանակէ հայ
ժողովուրդին միահամուռ բաղձա-
ցած Միութեան գէմ կենալ ու
այդ պատճառաւ ալ գործը զրկել
անոր նպատէն :

Այս ամենը ցոյց կուտայ թէ
այդ մարդիկը Հայաստանը առանց
Հայութիւնը կուզեն :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄՕՏԱՌՈՐ ԱՐԵՆԵԼՔԸ

Մօտաւոր Արեւելքի խնդիրները
բաւական խառնակ երեւոյթ մը կը
ներկայացնեն : Փորձներ անոնց մէկ
ամիտի պատկերը ուրուագծելու :
Մակեդոնիոյ մէջ բարեկարգութեան
գործը կրկին քայլերով կը յառաջա-
նայ և երբեմն ալ խնչափառներուն
պէս՝ գլուխն առած՝ դէպի մէկ կամ
միւս կողմը կը շարժի :

Ոստիկանութեան օտարահպատակ
պաշտօնեաները շատ փոքր թուով ըն-
դունուած են, պարտաւոր մը որ արդէն
ինքնին կը բաւէ բարենորոգութիւն-
ներուն յապաղումը ապահովելու :
Վերջէլ մ. մերժած է Գերմանացի
ոստիկաններ զրկել, որով նա Սուլթա-
նին նոր հաւաստիք մը կուտայ իւր
անասան բարեկամութեան : Գերմա-
նիոյ այս ծայրայեղօրէն սինիքական
ընթացքին հանդէպ՝ մարդ չկրնար իւր
գարշնքի զգացումը զսպել :

Մակայն միւս կողմանէ՝ Մակեդոնիոյ
ոստիկանութեան մէջ Բուլղարիոյ քառեւ
բնակաւորութեան մը ձեռքը մեքենա-
ներու պէս ճշգրտեալ և անգործէն գոր-
ծելու վարժուած պաշտօնեաներու բա-
ցակայութիւնը այդքան մեծ չարիք մը
չէ :

Եթէ թուրքը այս օտարներուն գոր-
ծունէութիւնը ինչպէս քաջալերելու
մտադիր է՝ կրնանք դուշակել երկու
լուրերէ : Մին՝ այս է թէ թուրք
պաշտները խաւով ժողովուրդը կը գրգռ-
ուն իրենց եւրոպացի պաշտօնակից-
ներուն դէմ : Միւսը՝ օտարահպատակ
պաշտներուն թօշակի խնդիրն է, Բա-
րեկարգիչ ծէրութիւններու ներկայաց-
ցուցիչները կը պահանջեն որ մակե-
դոնական նահանգներուն մէջ գտնուող
հօտերուն վրայ դրուած տուրքերը
յատկացուին այս նպատակին և
հաւաքումներուն մէջ սովորական
եղող սնկանոտութիւններուն դէմ
լքելու ապահովութիւն Օսմանեան
պաշտին մէջ խոշորէկ գումար մը
գրուի :

Սուլթանը հոս ալ սկսած է ձգձգու-
մի և անվերջ առարկութիւններու
քաղաքականութիւնը որ միշտ՝ իրեն ի
նպաստ կը գործէ :

Թրքո-Պուլկարական համաձայնու-
թեան մէջ խոստացուած ընդհանուր
ներումը՝ անլուր-հրաշք՝ կը բաշխուի
լիաբուռն Մակեդոնիոյ քաղաքական
յանդաւորներուն : Ապա թողուած
ներումն թիւը 1500 ը անցած է և
ոմանք զայն մինչեւ 3000 կը հաննի

Այս իրողութիւնը որ թուրքիոյ վերջին ժամանակներու պատմութեան մէջ դժուար թէ իւր նախնիքաց ունենայ՝ սակայն կրնայ մեկնուիլ :

Թուրքիա իւր կողմէն պայմաններուն մէջ մասը գործադրելով իւր հաստատութեան եւ բարի կամեցողութեան մէջ ցայտուն ապացոյցը տալ կ'ուզէ եւ նոյն ժամանակ՝ ինչպէս որ մեծ տէրութիւններու հետ իրացած միջոցին Պուլկարիայ հետ համաձայնելը՝ միւսներու երեսին ապտակ մըն էր՝ այնպէս ալ մեծ տէրութիւններուն պահանջները այնքան դժկամակութիւնով կատարած միջոցին Պուլկարիոյ խնդրած ներուժին այս փութկոտ գործադրութիւնը այն ապտակին կրկնութիւնն է : Եւ ասոր հետ մէկտեղ բարենորոգումները էտրինէի վերայ ալ տարածելու Աւստրիա եւ Ռուսիա կը հասկնան զայս եւ Պուլկարիոյ մասին շատ սիրալիկ զգացումներ տածած չունին : Իշխանութիւնը Անգլիական ազդեցութեան տակ ինկած կը կարծուի : Աւստրիացիները ներուժը իբրեւ միջոց մը կը նկատեն՝ որով Սուլթանը կուզէ Մակեդոնիոյ մէջ հազարաւոր զորքացած, անգործ դժգոհներ նետել որպէս զի խառնակութիւնները վերսկսին բարենորոգումը ընդհատելու : Բերջնականապէս տոկալի արհեստանոցներուն մը մէջ խեղդամահ ըլլայ : Այս մեկնութիւնը մեզի անհարկ կերպով յոռտես կը թուի : Անշուշտ Աւստրիական նախնիքի զեղին ակնոցն է որ եղելութիւններուն վերայ անախորժ գոյն մը կը սփռէ : Մեզի՝ ճշմարտութիւնը սա ըլլալ կը թուի թէ Ռուսիոյ, Իտալիոյ, եւ Պալքանեան տէրութիւններուն չափ ալ Սուլթանը կը վախնայ Աւստրիական ոտնձգութիւններէն եւ միանգամ ընդ միշտ կը տեսնէ որ այս փութքիկ տէրութիւնները՝ իրենց չանքով եւ զիտումներով գէթ ցամաքէն բաւական լաւ պատնէշ մը կ'ըլլան հիւսիսէն սպառնացող մեծ վտանգին դէմ : Հետեւաբար կ'ուզէ զայնս սերահանելով, իրեն հետ ու իրարու հետ միացնել : Ահա թէ ինչու Պուլկարիոյ-Սերպիական համաձայնութիւնը մը մշակելու խօսքը կայ՝ իբրեւ լրացուցիչ թրքո-Պուլկարականին : Սակայն աւաղ որ Սերպիա Ռուսիայէն կ'ընդունի իր հրահանգները արտաքին գործերու մասին եւ այսօր ներքին կերպով շատ խոյլ, գրեթէ տարբարեւորած վիճակի մէջ է :

Զինուորական համաձայնութեան մը խնդիրը որ Պուլկարիոյ եւ Թուրքիոյ մէջ բացուած էր՝ առ այժմ Սուլթանին կողմէն ականջի ետեւ նկատուած է :

Սակայն ինչ որ ցաւալի է՝ ոչ պուլկարները եւ ոչ թուրքերը դեռ իրենց բանալիները խաղաղութեան կոտանի վրայ դրած են : Այս կը ցուցնէ թերեւեւ թէ դեռ երկուստեք կատկածները բոլորովին չեն փարատած :

Տեսնե՞ք Բարիկ գացող թրքական զինպարը որ Սուլթանէն հրաման ստացած էր Սօֆիա՝ իշխանին հետ տեսուիլ եւ համաձայնութեան մասին խօսակցելու ինչ պիտի ըսէ իւր Վահագնին կողմէն :

ՕՐԻՓՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

3.—Յունիս 12 ի նոր օրէնքին տրամադրութիւնները կրնան ամփոփուիլ հետեւեալ կերպով :

Հայ իշխանութիւնները եւ եկեղեցական մարմինները կը զորկուին իրենց վարչական իրաւունքներէն եւ ձեռնհասութիւններէն : Հայկական եկեղեցիին աշխինքն աթոռներուն, եկեղեցիներուն, մենաստաններուն, վարժարաններուն, ուսումնարաններուն եւ ուրիշ հայ կրօնական հաստատութիւններուն պատկանող ամէն գիւղական եւ քաղաքի կալուածները պիտի մատակարարուին ուղղակի Երկրագործութեան եւ կայուսներու նախարարութեան ձեռքով, իոկ քաղաքապետութեանց շրջանակին մէջ գտնուող կալուածները կամ հաստութեան արժէթուղթները ներքին գործերու նախարարութեան ձեռքով : Ետքէն ստացուելիք ինչքերն ալ այս երկու դատակարգներէն մէկուն կամ միւսին մէջ պիտի մտնեն : Այս բոլոր ստացուածուց եկամուտները պիտի կեդրոնանան ներքին գործերու նախարարութեան ձեռքին մէջ : Նկատմաներուն ամբողջութեան 10 ր առ հարիւր վար պիտի դրուի ծախքերուն, եւ 5 առ հարիւր պահեստի գումարի համար : Մնացեալէն պիտի կանխահանուի ինչ որ հարկաւոր կը կարծուի Պետութեան կախում ունեցող վարժարաններու ծախքին համար, եւ պիտի յանձնուի Հասարակաց կրթութեան նախարարութեան : Ապա եկեղեցական մարմիններուն պիտի տրուի ինչ որ հարկաւոր է իրենց ծախքերուն համար, որոնց հաշուեցոյցը պիտի պատրաստուի եւ ճշդուի ներքին գործերու նախարարութեան ձեռքով առանց սակայն հայ եկեղեցական իշխանութեանց գործակցութեան : Այս վերջինները եւ ոչ մէկ իրաւունք ու կարելիութիւն պիտի ունենան դատարաններու դիմելու, ներքին գործերու նախարարութիւնը միայն ունենալով իրաւունք տնօրինելու եւ վճարելու, առանց դատակոչութեան երթարկուելու, ամեն խնդիրները՝ վերաբերեալ եկեղեցապատկան ինչքերու, գործ միեւնոյն ժամանակ կոչուած է տնտեսել :

Այն հոգերը, որոնց վրայ կառուցուած են եկեղեցիները, մենաստանները, բնակարանները եւ վարժարանները, իբր ազատ կը նկատուին նախարարական միջամտութենէ, ինչպէս նաեւ գրեթէ երեք հարիւրակալ պարտէյ այդ շէնքերուն բոլոր տիքը, պայմանաւ որ վարձուչտրուին կամ չհաճագործուին : Վերջապէս եկեղեցիին կը ձգուի սեփականատէրի չոր անունը միայն եւ զայն կը զրկեն ընդ միշտ իր ամեն կալուածներուն եւ եկամուտներուն մատակարարութենէն, յանձնաձեւմէն ու վայել-

լումէն, այնպէս որ նա (եկեղեցին) թողուած է Պետութեան նախարարութեան քմահաճութեան ու կամքին :

4.—Այս նոր տնօրինութիւնը արդարացի չափաւ յառաջ կը բերուի այն դերագոյն իրաւունքը զոր ամէն կառավարութիւն ունի իր ձեռքին մէջ առնելու վերակացութիւնը եւ իսկական հսկողութիւնը իր երկրին մէջ գտնուող ամեն մասնաւոր վարչութեանց : Բայց այդ գերագոյն իրաւունքը լիովին նախատեսուած ու պահպանուած էր 1836 ի հիմնական օրէնքին մէջ : 35 րդ. յօդուածին, 3 րդ. հաւանածին զօրութեամբ « Գրեգորեան հայերուն ամեն եկեղեցապատկան ինչքերու վերին մատակարարութիւնը » կեդրոնացած էր Էյմիւնածին հայ Սինօքի ձեռքերուն մէջ : Յիշեալ Սինօքի անգամները կայրը կ'անուանէր 34 րդ. յօդուածին զօրութեամբ իսկ Սինօքին գործողութիւնները կը հսկակշռուէին ուղղակի Ռուս կառավարութեան կողմէն, ըստ 45 րդ. յօդուածի, նշանակուած կայսերական փոխանորդէն (բօքսէր) : Այդ փոխանորդը պէտք է ստորագրէր Սինօքին ամէն տոմարները 49 րդ. յօդուածին տրամադրութեան համեմատ : Այս միահաղայն զգուշութիւններու շնորհիւ Սինօքի մատակարարութիւնը ոչ միայն կառավարութեան հսկակշռին կ'ենթարկուէր, այլ գրեթէ նոյն իսկ պետական մատակարարութիւն մը կը դառնար : Ասոր համար է որ այդ միջոցներուն մուծումէն ցայսօր, հայ Սինօքի մատակարարութեան մասին երեք դժգոհութիւն մը լսուած չէր : արգէն գոյութիւն ունեցող հակակշիւը բաւած էր Պետութեան շահերը պաշտպանելու եւ պահպանելու հայ եկեղեցւոյ մատակարարութիւնը ու է նոր հսկողութեան մը պէտքէն : Ուրեմն տեղի չկար հակաքննութիւն հաստատուելու հարկը յառաջ քշելու իբր թէ այդ քննութիւնը արգէն գոյութիւն չունենար իսկապէս եւ բաւականապէս :

Շարունակելի

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ կընքուած համաձայնութիւնը՝ ինչպէս Մանչը եղբորը երկու դրացի երկիրներու մէջ մեծ գոհունակութիւնը յառաջ բերաւ, նոյնպէս Իտալիոյ եւ Ֆրանսայի վերջին մերձեցումը, նուերագործուած առեւտրական եւ իրաւարարական նոր զանազաններով, եկաւ, երկու Լատինացի քոյր ազգերու սրբտերը նորէն կցից իրարու որ ժամանակ մը ցրտացած պատերազմի փոսիկ կը սպառնային Ալպան ստորոտներուն

վրայ : Այս կերպով ազատական երեք մեծ ազգերու—Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ— իրարու մօտեցումը բերական է որ միւս նուազ ազատական—Աւստրիոյ, Գերմանիոյ—եւ մշակութապէս—Ռուսիոյ—երեք մեծ ազգերու մտքին վրայ լաւ ազդեցութիւն ըրած չըլլայ : Բայց ասոնք, զէթ առ այժմ, ատով ինքզինքնին ուրախ ցոյց տալ կը ջանան, յայտարարելով թէ «մեր զինակիցներուն ստացած նոր բարեկամները մեզ ալ բարեկամ եղած կը սեպուին » : Բացառել հարկ չէ թէ այս յայտարարութիւնը կեղծ քաղաքավարական անաճեւ մըն է, որուն տակը պահուած են ծանր մատանջութիւններ՝ նախ Ռուսիոյ համար, որ կը մտածէ թէ իր զինակից Ֆրանսան իր հակառակորդ Անգլիոյ հետ կը կապուի բարեկամական աշխտակ կապէլ : որոնք կրնան թրանսպիր հետ ունեցած զինակցութիւնը չեզոքացնել գործնականին մէջ : Նոյնպէս Գերմանիան կը մտածէ թէ իր սահմանակից հակառակորդը հիւսիսային հրակային հետ նիզակակից ըլլալէ զատ, երբեակ զինակցութեան մէջ անդամ ալ իր հետ կը կապէ սերտ կապերով, որ անգործ յեղաշրջում մը առաջ կը երթէ երէկ երկեակ եւ երեակ զինակցութեան հաւասարակշռութեան նօտարին մէջ :

Բայց հոգ չէ, այդ երեք կայսրները քրնց այդ մտահոգութիւններով թող տանջուին, մենք դանք առդին : Ալպան երկու կողմի քոյր ազգերու նոր բարեկամութիւնը նուիրագործող այցելութեան առթիւ Ֆրանսայի նախագահ Մ. Լուպէի եւ Իտալիոյ թագաւորին Հոռմի մէջ արտասանած բաժակաճառքը մեր ընթերցողաց հորհրդանշան է : ճառեր որոնք երկու Լատինացի ազատական ազգերու եւ իրենց կառավարութեանց միջեւ գոյացած համաձայնութեան անկեղծ արտայայտութիւններն են : համաձայնութիւն՝ որ ոչ բերտ ուժի այլ զգացումի եւ գաղափարի ազատութեան վրայ հիմնուած ըլլալով, ստոր մեկնանկեղծ եղած ըլլալ կը կարծեն շատերը խաղաղութեան պահպանումը արդարութեան եւ տառապող ազգերու ազատագրումին մէջ փնտրուի :

Գուրբիւնալի պալատին մէջ ի պատիւ Մ. Լուպէի տրուած հացկերութիւն միջոցին վերջոր էմանուէլ թագաւորին արտասանած բաժակաճառը ահա

«Ճէր նախագահ,

Անգղի իտալիայ սիրտը իմ սրտիս հետ խնդակին կը բարախէ այս պահուս, երբ յանձին ձեր կողմունքով հոգի Ֆրանսական ազգին սիրելի հիւրը Մեր կառավարութիւնները շատ զերաւ համաձայնեցան, հասերախուրիւսմը աշխատելով խաղաղութեան պահպանման, որ դերագոյն բարեքն է, ամէն պետութիւններ կը ջանան տակաւ առաւել եւս ամրապնդել զայն, եւ ստորագրելով իրաւարարութեան ու ստատական գահապիսները, ապահովելու քաղաքական խաղաղութիւնը եւ ամրացուցին ընկերային խաղաղութիւնը Իտալիա եւ Ֆրանսա, երկուքն ալ լատինական հին ցեղէ յառաջ եկած ըլլալով, դարեւու ընթացքին մէջ, ցեղակցութեան անջնջելի առանգործութիւններ անվար պահած, այսօր կ'ամրապնդեն իրենց բարեկամութիւնը յաւիտեական Հոռմի մէջ, ուրկէ երկու ժողովրդաց ազգային ոգիները այնչափ թելադրութիւններ քաղած են : Զեր ձեռքը սեղմելով, սիրտս կը զեզոս

փառաւոր յիշատակներով եւ վեհագոյն զգացումներով : Եւ այդ մտածումներով, այդ զգացումներով կը բարձրացնեն բաժակս, քրանսայի բարօրութեան եւ արժանաւոր ու ազնիւ նախագահին կենաց :

Մ. Լուսկէ թագաւորին պատասխանեց հետեւեալ բաժակաճառով

« Վեհափառ Տէր,

« Շատ դժուար է ինձ այս պահուստայանի զգացումներս եւ չնորհալու լուծիւնս Ձեր Վեհափառութեան սրտագին եւ ազնուագոյն բառերուն, ինչպէս նաեւ այն փառաւոր եւ անմոռանալի ընդունելութեան համար, զոր բովանդակ խաղիւժ իր Վեհափառ թագաւորին եւ թագուհւոյն հետ միացած՝ ըրաւ ձրանսան պատուելու համար Վեհափառ Տէր, Ձեր բաւերը շուտով արձագանգ պիտի գտնեն ամէն ձրանսացիի սիրտին մէջ : Տարակոյս չկայ թէ ձրանսա եւ խաղիւժ այս օրունան չէին սպասիր իրենց ցեղակցութիւնը ծանուցանելու համար, որ իրարու կը մօտեցնէ զիրար եւ կը փախաքցնէ որ իրենց այս փոխադարձ երջանկութեան մէջ բարեկամ մնան միշտ իրարու : Բայց ինչպէս Ձեր Վեհափառութեան, այնպէս ալ ինձ համար մեծ ուրախութիւն է իրենց բարեկամութեան սուելի եւս ամրացած ըլլալը լսել այս փառայեղ Հոռոմին մէջ, զոր ձրանսացիներն եւ խաղիւժները կը յարգեն իբր իրենց մայրն եւ իրենց մօքին մեծ գործերուն թելադրիչ : Մեր կառավարութիւններն ըմբռնեցին թէ որչափ պէտք է իրենց երկիրներուն շահերը համեմատելով պահել, իրարու հանդէպ զգացած համակրութեանց հետ : Իրենց երանաւէտ գործակցութիւնն յազաչ եկան վերջին օրերս իրաւարարութեան եւ անտեսական դաշնադրերը որոնց մէջ ես ալ Ձեր Վեհափառութեան պէս, քաղաքական խաղաղութեան երաշխաւորութիւնն եւ ընկերային յառաջդիմութեան արդիւննաբեր գործիք մը կը տեսնեմ, Վեհափառ Տէր, իմ սիրտս ալ միեւնոյն զգացումներով լեցուն, խաղիւժ բարեգաւաճման եւ միեւնոյն համար ունեցած ժողովանքներս կը միացնեն այն իղձերուս, որով ողբերգութեամբ Ձեր Վեհափառութեան եւ Նորին Վեհափառութիւն թագաւորին երջանկութեան համար :»

ՆԱԽԱԿ ԽՄԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ՏԵՐ ԽՄԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Շնորհակալ եմ որ իմ յօդուածս « Աւետարան »-ի ուղղութեանը զէմ տրպելու բարեհաճեցաք : Բայց Ձեր գիտողութեան մէջ բողոքականութիւնը « հերձուած » անուանեցիք : (*) Եթէ կը կարծէք որ բողոքական հայերը ազգային զանգուածէն բաժանուած են, չիտակ չէք խորհիւր : Ազգով, արեւնով, միասով, ոսկորով, հայ ենք ծնուած, հայ ենք մեծցած ու կը մնանք հայ մինչեւ մեր մահը ու հոգիներս ալ հայ կը մնայ : Իսկ հաւատքը ազգութեան հետ բնաւ ու երբէք կ'ազնուի : Այն ազգերը, որ կրօնքը ազգութեան հետ կը խառնեն ու կը նոյնացնեն, չարաշար կը սխալին, ինչպէս որ այսօր կը տեսնենք որ ուրիշ ազգեր կը ջանան հայերուս մէջ մօցնել իրենց ազգութեան հետ խառնուած կրօնքը : (**)

(*) Մենք ըսել ուզած էինք բողոքականութեան մէջ հերձուած ծագած և և և իմ

Մենք բողոքական հայերս բնաւ չէինք ձգել լուսաւորչական եկեղեցին, եթէ նա չեղած չլինէր Բրիտանիոյ ու Առաքելոց վարդապետութիւնէն : Մի սրտովիք իբրեւ լուսաւորչական : Եթէ Ձեր ուզածը ճշմարտութիւն է, մենք կրնանք պարզ կերպով մէկիկ մէկիկ ցուցնել լուսաւորչական եկեղեցւոյ շեղումները : Հոս շատ մը սխալներէ միմիայն մէկը յիշենք : Պողոս Առաքելաւ կըսէ թէ « պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, միայն կ'ընէ աշխարհ լուսաւորչական եկեղեցին բոլորովին անոր հալաւակը կը գործէ : Գուցէ ըսէք թէ, « եպիսկոպոս մի պաշտօնակայ է ինչպէս մի զօրապետ, նա կարող է իր պաշտօնը կատարել թէ աւանդաբան ըլլալ թէ ամուսնի » : Մենք կրնանք ոչ, ատանկ չէ : Եպիսկոպոսը պէտք է « զի իւրում տան իսկ բարեւօք վերականգնու լեալ իցէ » : որդեակ ունիցի, որ ինքնազանդութեան կացցեն ամենայն պարկեշտութեամբ, ապա եթէ ոք իւրում տան վերաբացու չպիտիցէ լինել, զիմք եկեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լինիցի » : (ա Տիմ. 4. 2-5)

Անա սա է մեծ պատճառներէն մին, որ խանգարել է լուսաւորչական եկեղեցին : Եթէ կուզէք, Ձեր քաղաքի էջերը բաց են Ձեզ համար, հրամայեք խօսակցիք սիրով ու յարգանքով չինութիւն ազգիս : Սակայն գիտեմ որ չէք ուզիր ու խոյս կըսաք :

Բողոքական Բարդուի

Ա. ԱՄԻՐԻՍՆԱՆՆԵՐ

Թ. Գ. Իսկ գալով ազգային խնդրոյն, համայն աշխարհ պիտէ որ հայ բողոքականութիւնը առ նուազն այնչափ տանջուելու է ու կը տանջուի թշնամիներէ որքան լուսաւորչականքը : Եւ մենք բողոքականքս համոզուած ենք կրօնական խաղաղութիւնը գաղափարաց չազգեր ազգայնութեան վրայ : Ահա Անգլիան, Գաղղիան, Գերմանիան, Ամերիկան ու ուրիշ ազգեր ունին դաշնադան եկեղեցիք, բայց ազգութեամբ մի են ու միասին կը գործեն : Սակայն ցաւալին այն է, որ մեր հայ ազգայինք Համաձայն չեն ազգային խնդրոց մէջ : Կրօնական տարբերութիւնը չէ ազգին վիստողը, ալ եղբայրասպան կուսակցութիւնքը :

ՆՈՅՆԸ :

Դիտ. — Խմբ.

Մենք լուրջ վիճարանութիւնէ բնաւ խոյս չենք տար : սակայն կրօնական վէճերու համար մեր թերթի ուղղութիւնը չը ներքին սխալակներ բանալ : Իսկ ձեզ հասկցնելու համար թէ միականի ակնոց կը գործածէք, հոս երկուստով կը պատասխանենք ու կը գոցենք խնդիրը :

Կ'ըսէք թէ լուսաւորչական եկեղեցիէն բաժնուելու էք ա՛նոր սխալներուն համար, եւ իբր մեծնազդիւնաւոր սխալ ցոյց կուտա՞ք մեր եպիսկոպոսներուն շանդանաւով, առաքելային խօսքերը փաստ բերելով : Մենք ալ միեւնոյն առաքելային Կորնթացոց պատգամը ձեզ կը ներկայացնենք, որ ձեր ըմբռնումին սխալը ցոյց կուտայ :

« Արդ ան բաներուն համար որ զուք ինձի գրեցիք, աղէկ է մարդուս որ կրկան չմտնայ » (զլ. 1. 5) : « Բնազդ կուզէի որ ամեն մարդիկ ինձի պէս (ամուսնի) ըլլային » : Բայց ամեն մէկը իր պարգեւը ունի Աստուծոյ, մէկը ասանկ եւ միւսը անանկ : Բայց չա-

(*) Ընդ այս նպատակով որոնք եւ լամ միմիայններու հետեւեալ կարգ մը հայպատուելիներն են որ աշխարհաբաղաքացիութիւն քարոզած են մեր մէջ :

մուսնացածներուն ու որբեւայրիներուն կըսեմ : աղէկ է անոնց թէ որ ինձի պէս կենան : Հապա թէ որ ժուկ-կալութիւն չունին՝ թող ամուսնանան ինչու որ աղէկ է ամուսնանալը քան թէ բոլորքիւր » (զլ. 7-9) :

Հայ. Եկեղեցին ալ ճիշդ առաքելային այս պատգամներն կը հետեւի. Ժուկ-կալութիւն ունեցող եւ ուխտողներէ կուսակցուն կը ձեռնադրէ, որոնք ընտանեկան յարաբերութիւններու ու ինքիքներու չեն միջամտել, իսկ աւանդաբաններէն միայն քահանայ մը կը ձեռնադրէ, որովհետեւ ասոնք են որ ընտանեկան յարաբերու մէջ իրենց դերը ու պաշտօնը կուսնենան :

Պատուելի, դուք ձեր այդ գիտողութիւնը կրնաք պապականներուն ընել : Եւ ճիշդ ասոնց ծայրայեղութիւններուն պատճառաւ էրիտորդքականութիւնը ծնունդ առաւ քանի մը դար առաջ : նոյնպէս ալ անցեալ դարուն եւրոպայի անտեսական դրութիւնը ստեղծեց սօսալիզմը, որ հաւատարապէս, գէթ առ այժմ, Հայերուս համար չէ : Բայց եւրոպական նորութիւններ կապիղո կարգ մը պարոններ եւ նոյնպէս միմիայններէ հաց փնտրող պատուելիներ (ձեր մատնաշածին համեմատ) իրենց փորին համար ջանացած են ու կը ջանան հայկական Միութիւնը երկպառակել : Այդպիսիները պառակտիչ մեքրոպներ են հայ ազգի զիւնուն եւ զգուցելի :

ԱԶԳԱՅԻՆ

ՏՓՂԻՍ Ի մէջ ապրիլ 4ին իր ընկերարանին մէջ խեղդամահ գտնուելու է գնդապետ Յակոբ Գաւթեան Լազարեան, որ 70 տարեկան ըլլալով շատոնց զինւորական ծառայութեան քաջաւած առանձինն կապրէր : մեծ հարստութեան տէր էր, այսինքն կալուածներէ եւ գիւղէ մը զատ 35000 ռուպլի պատրաստ գրամ ունի եղբր, զորս իր եղբոր կը տակեր է առանց բաժին հանելու ազգային կամ հանրային հաստատութիւններու : Ապանուութիւնը գործած է իր ծառան որ փախած է ու կը փնտռուի կառավարութեան կողմէ :

ԳԱՆՁԱԿ Ի առաջ. փոխանորդ Տ. Ենեիկ Վ. որ Խաղքով աքսորուած էր, անկէ Օրենպուրկ փոխադրուած է :

ԻԱՐԻԶ Ի մէջ մեռած է գերադասութեան պատրաստուող եւ փայլուն ողբերգակ մը ըլլալ խոստացող Տ. Գրիգոր Կիւլպէնկեան : այս 23 տարեկան երիտասարդը 3—4 տարի առաջ Բաբիգ գացած էր դերասան ըլլալու համար, եւ ասկէ 4 ամիսի չափ առաջ Օրենպուրկ քննութիւնը տալով մէկ տարուան շրջան մը շահած էր : զինք ու իր ձերբերը ճանչցողները կը վկայեն թէ Հանգուցեալը Աղամեանին արժանաւոր յաջորդող մը եւ թերեւս քանի գերազանցող ողբերգու մը պիտի ըլլար : Յուզարկուտորութեան ներկայ գտնուած են Գաղղիոյ հանրաժանութ գերասանները : Մուշէ ու Սիւլլի, Բոլ Մուշէ

են, եւ ասոնք որոշած են իրենց սիրելի հայ աշակերտին ի յիշական շիրիմ մը կանգնել իրենց ծախսովը :

ԿԱԱՑԷ նամակաւ մը կը խնդրեն մեզմէ հրատարակել թէ տեղւոյն հայ պանդուխտները 164 ֆր. հաւաքելով զրկած են Հ. Յ. Գալիակցութեան Արեւմտեան Բիւրօին :

ԳՈՒԴԱՆ Ի խմբագիր Տ. Մեծատուրեան « Երկրագործութեան Արժանիքի ասպետ » անուանուած եւ Բարիկի երգ բողոքական ընդհանուր մրցումին մէջ մէտալ մը ընդունած է :

ՎԱՌՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆԱՄԸ

Աղքատահամ ընկերութեան ընդ. Ժողովոյ Գիւնան ներկայիս կուգայ յայտարարել թէ ընկերութեան ընդհանուր Ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակի 25 ապրիլ, ժամը 2 ին Լազ. Վարժարանի սրահին մէջ :

Օրակարգ

Ա. Վաւերացումն նախորդ նիստի ատենադրութեան :

Բ. Համարատուութիւն Տնօրէն խորհրդոյ

Գ. Առաջարկներ

Դ. Հրաժարական Տնօրէն խորհրդոյ

Ե. Նոր ընտրութիւն, եթէ հարգատուի :

Կը խնդրուի ընկերութեան բոլոր անդամներէ, որ ներկայս իբր հրակերպիչ նկատելով, հաճին ներկայ գտնուիլ որոշեալ ժամուն :

Ի Գիւնան Ընդ. Ժողովոյ Ատենադպիր

Թ. Գուրպէնեան

21 ապրիլ 901
Վառնա

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ԾԻԱՊԱՐԵՍ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. « Բ. « (433 էջ) 2 ֆր.

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿՈՆ երկրորդ անգամ սպաքուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԷՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութեան առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅԳԵՆԻԲԻ ԶՈՋԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կիսնաքէն : Ձեռնալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՌՆԱ « Ի Ր Ա Ն Ք »-ի խմբագրութեան

ՊՈՒԳՐԷՇ Տ. Օրենիկ Փափագեանի եւ Տ. Յ. Պիպէնեանի

ԳՕՆԱԿԱՆՆԱՍ Տ. Սիսակ Մէլիքեանի

ԳԱՀԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկացեանի

ԱԶԳԱՅԻՆԳԻՐԻՍ Տ. Ստեփան Մագ. մանեանի

ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Պրանգեանի

ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Առաքելապի

ՓՐՕՎԻՏԵՆՍ Տ. Մ. Տէր Գողոսեանի

ՖԻԶՊՈՒՐԿ Տ. Կ. Մարութեանի



Մ Ո Ւ Ծ Տ Ա Տ Է Ն Ե Թ

Մուշ անվան խնաման առաջը երգերու մասն անհետն քի թափախալ լալ լէր իմիջ տիր :

« Փետր . 22 տէ Սասուն գաղապանն ճափիկ Գիւրտ աշխրէթի էրմէնի Գէտայիլէրի պէհաւնէ իտէրէք Մուշա եւթիշտի : Եւհրին իսլամարը պու վագաա սէպէպի իլէ էրմէնիլէրէ գարշը խուսուժէթէ պաշլատըլար : Պունլար տիւքեանլարընը գարալուպ իտէնէլէրինէ չէքիլտիլէր իտէնէթիւրք վէ քիւրտէհալինին զարէգքեարլըլընտան բէք գուրթուլամըլար : Զոգլարը տէօկիւշտիլէր : Իսլամար սիւահէլտէ զոգալարը կէզիլտըլար վէ տիւքեանլարը եաղլա իթտիլէր : Հիւքիւմէթ պու հալի մէնն իթմէյոր :

« Փետր . 28 տէ, կիճէ, Մուշըն սաղ ճիհէթիւտէքի էրմէնի էվլէրի Գիւրտլէրտէն իհաթէ օլընտը : « մահալլէտէ փէտայիլէր սագլանմըլ յաթիլէր :

Իսլամ էհալի զապիթիլէր իլէ պէրապէր հէր թարաֆը եօգլատըլար, ֆագաթ եալընըլ 2 ալ թիւֆէնիկ լպուլըլար : Մէզքիւք մահալլէ պու սաաթա գատար զապիթիլէ նէգարէթի ալթընա ալընմըլ տըր :

« Շիմտիլէք (Մարտ 15) չէհիլ իշէրիսինտէ գըրկըն վէ մուգաթէլէ վուգու պուլմաուր . ֆագաթ էթարաթա պաշլամըլ տըր Մարտ 4 տէ Թորոս Օլօեան, Եէյսեուսուֆլը վէ Մարտիլուս Կիրակոսեան չէհիլտէն պիր պուշուգ սաաթ իրագաւ մագթուլ (պաննուած) պուլընտըլար : Գաթիլլէր Մօշիկ, Օսման, Տէրվ շ վէ Հիւսէյին քիւրտլէր օլտըլը հալտէ հիւքիւմէթ պուլարը թուլթմատը : Գիւրտլէր վէ Թիւրքլէր աշըգտան սէօյլէյորլար քի Մուլթանտան եհնի իրատէ չըգմըլ էրմէնիլէրի գըրմագ իշիւն : « զաթէն Րուսիա տալի էրմէնիլէրտէն եիւզ չէվիլմիշ տիր » տէյօլլար :

Իշպու էֆքեար մահէլին հիւքիւմէթիւտէն իսլամ էհալի իշիւնէ նէշր օլընմըլ տըր »

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թիւրքիս

Մաքէթիւտիւնըն բօլիթիգա միւթթէհիլէրինէ Սուլթանտան ալֆ տիլէմէք իշիւն Մայիս 1 տէն իթիպարէն : 4 կիւն միւսատէ վէրիլմիշ օլտըլընըլ վէ պու միւստէթ խիթամընա գատար նէտամէթ կէօսթէրմէյէնիլէրին աֆլա նալիլ օլամայաճաղարընը օրանըն թիւրք կաղէթալարը բէսմէն իլան իթմիշ տիրլէր :

« Գէզա մէգքիւր կաղէթալարին պէյանը իւզրէ : Մաքէթիւտիւս վիլայէթիլէրինտէքի թիւրք հիւ-

քիւմէթիլէրի ալտըլարը թալիմա կէօրէ, գաշլըլ վէ հիւքիւմէթ իթմիշ օլան Մաքէթիւտիւտիւտա մէմլէքէթիլէրինէ ալտէթ իթմէլէրի իշիւն սուհուլէթ վէրէճէքլէր իմիշ :

« Սթանպօլ 21 Ապրիլ—Իգմիր հատիսէսինտէն սուլալը Եունան վէ Թիւրք հիւքիւմէթիլէրի պէյնիտէ տիւն վէպու կիւն միւզէքէրէտէվամ իթտի, Հատիսէի թահգիգ իթմէք իշիւն Թիւրք վէ Րում աղալարտան միւրէքէպ պիր գօմիսիօն թէշքիլինի թիւրք հիւքիւմէթիլ թէքլիթ իթտի :

Եունան էլլիսի պու թէքլիթիլէրտտ էլլէյուպ, մէգքիւր վագատան սուլալը մէսուլ օլան պիլթիւն զապիթիլէ մէմուլարընըն ալլընը վէ վալի բաշանըն տալի բէտիլ էլպիսէսի իլէ Եունան գօնօլտահանէսինէ կիտէրէք աֆլ իսթիւրմա իթմէլէ մէհպուր օլմասընը իտտա իթտի :

Պապը Ալի տալի պու թալէպիլէրտտ էլլէտի :

Աթիւնա կաղէթալարը Սթանպօլ Եունան էլլիսիլին կէրի չաղըրըլմասընը թապիթիլէ իտիյօրլար :

« Ժէնէրալ Տիւօրօնի մայէթ զապիթիլէրի իլէ Իւքիւպէ վասըլ օլմուշ տըր :

« Բարիլ Օսմանըլ էլլիսի Միւնիլ լաշա պու կիւն Սօֆիայա եէթիլչէճէք տիր :

Սուլթանտան մախսուսի բէնիս Գէրտիւնտա եօլլանըլմըլ օլան պու էլլիսին մէմուլիլէթիլինի թափալթը իլէրտէ վէրիլէր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Ե Պ Ե

Լօնտօն 20 Ապրիլ — Ճարօն տօնանմաուընըն Բօրթ—Արթուր իւզէրինէ եհնի պիր հիւսուլը բէսմէն թատիկ օլընըյօր : Էն էվլէլ 5 առէտ ճարօն Թօրթիլէրի կէօրիւնիւպ նապէտիտ օլտըլար : Սօնրա 10 առէտ էսկի վաքօրլար իլիմանըն էօնիւնտէ պաթըրմագ իշիւն կէթիւրմիշտիլէր : Բուսար պուլարա գարշը չէտիտ պիր աթէշէ պաշլատըլար վաքօրլարտան եհտիլի զարգ օլտըլար վէ իւշիւ Թօրթիլէրէ թէսատիլիլէ չալայա աթըլտըլար : Զաննա կէօրէ լիմանըն եօլու գարանմըլ վէ ճարօնըլարըն մագաւտի հասըլ օլմուշ տըր :

« Բէթէրպուրիկ 20 Ապրիլ — (Բէսմի) Ամիրալ Ալէքսիւպ պու կիւն չէօյլէ թէլէկըրաֆ վէրմիշ տիր : « Պու կիճէ սաաթ 1 տէ 5 առէտ ճարօն Թօրթիլէրի կէօրիւնտիլէր վէ պիլ տէրհալ աթէշէ պաշլատըլ : Թօրթիլէրտէնիլ աշըգլարընա կէրի կիթմէկէ մէհպուր օլտըլար : Սաաթ 3 տէ տիկէր 10 առէտ ճարօն վաքօրլար լիմանըն աղընա եւ նալտըլար թուլթուլտըլմագ իշիւն : ֆագաթ անէլէր վէ տիկէր

2 Թօրթիլէրիլէր զարգ օլընտըլար : Պիլիմ թէլէֆիաթըլմըլ օլմատըլ ճարօնըլարտան 80 քիշի թէլէֆ օլտըլար :

« ԽՕԳԻՕՏԱՆ իշար օլընտըլը իւզրէ, Ճարօնիա 4 օրտուսեանի 360000 քիշի մուհարէպէ մէյտանընա չըգարաճագ տըր :

« Բուսար շըմէնտըլէրի պօգարագ ճալնիտան կէրի չէքիլիյօրլար :

« Մուքաէնտէն իշար օլընտըլը իւզրէ, Բուսարըն մաղլուպիլէթիլտէն Մանչուրիա էհալիսի ճէսարէթիլէնէք անիլէրէ գարշը ըսեանա զալըլաճագլարընտան գօրգուլիյօր :

Խուսիսուլարտան միւթէլէքքիլ չէթէլէր ըուս աքէրլէրի իւզէրինէ հիւսուլ իտէրէք անիլէրին եօլլարընը քէսմէք էֆքեարընտա ըմըլլար :

« Սօն նօմէրօմըլտա եաղըլտըլը իւզրէ, Ճարօնըլարըն Ապրիլ 18 տէ Եալու ըրմաղընը կէշէրէք Բուսարա գարշը չէտիտ վէ ճալնիլէրտէն պիր մուհարէպէտէն սօնրա զալէպէ իթմէլէրի թատիկ օլընմըլ տըր : Մուհարէպէ 3 կիւն տէվամ իթմիշ տիր : Գօլիլէնչէնքտէքի միւստտէմէտէ ճարօնըլարտան 700 քիշի թէլէֆ օլմըլ պուլնա մուգապիլ ճարօնըլար ըուսարտան 28 թօք, բէք չօք թիւֆէնիկ վէ լէվաղիմաթ զապիթ իթմիշլէր : Եէնիլ տիւշէն պիր ըուս զապիթիլն պէյանը իւզրէ, մէգքիւր միւստտէմէնէ ըուսարըն թէլէֆիլաթը 800 տէն զիյատէ օլմուշ քէզա ըուսարտան 1 ժէնէրալ, 4 միւրալայ, էօլմիւշ վէ պիլ չօք զապիթիլէր եարէլի վէ էօլիւ տիւշմիւշլէր : Եէնիլ տիւշէն ըուսարը մըլտարլ 3 զապիթ վէ 300 միւլաղըլ վէ նէֆէրլէր :

« Բէթէրպուրիկ 20 Ապրիլ — Եալու ըրմաղը իւզէրինտէքի վուգուաթլարտան սուլալը էրքեանը հարալ սիւքիւտ գալմագտա տըր : ֆագաթ չէհիլտէ կէշէն ըվալէթէ կէօրէ, սօն մուհարէպէտէ 2000 ըուս թէլէֆ օլմուշ տըր :

« Եալու ըվալէրինտէ Բուսարըն մաղլուպիլէթի, Նօլօէ վրէդիա նըն զանը իւզրէ, ըուս աքէրին թէճէմիւսի թէլէլիլ օլընմասընտան իլէրի կէլմիշ :

« Ժէնէրալ Մաթէվ պիր պէնտ նէշր իտէրէք, մուհարէպէյէ գարշը պէյանը էֆքեար իթմիշ վէ սարֆ օլընան ագճէլէրին մէքթէպլէրէ թալիս օլընմասընը միւրաճճալ առտ էլլէմիշ օլմաղլէ, անըն պու պէնտի Բէթէրպուրիկա պէօյիւք թէլէսիլ հասըլ իթմիշ տիր :

Ե Ղ Բ Ա Ր Ք Ժ Ե Ր Մ Ա Կ Ե Ա Ն
Դ Ե Ր Ձ Ա Կ , Դ Ե Ր Ձ Ա Կ , Դ Ե Ր Ձ Ա Կ ,
Բօնապանցա փողոյ Թօմիս քիւ 6

Վերլին նորաճիւթեանը համաձայն արանց եւ տղայոց համար ամեն տեսակ զգեստներ կը պատրաստենք :

Ամառուան եւ ձմեռուան համար ընտիր կերպաններ ու մթերք մը մեր քով պատրաստ կը դնուի, որմէ կըրնուն օգտուիլ էն նորաճաշակ յաճախորդներ :

Իսկ ուրիշ տեղերէ հասած յանձնարարութիւնք արուած ջանքերու համեմատ ճշդիւ եւ փութով կը գործադրուին :

Հաստատուող համար անգամ մը փորձել կը բաւէ

3-4

ԼԷՍԵՏԱ Ք . ԲԷԹՐՈՆՊԷՅ

Ն Պ Ա Ր Ա Վ Վ Ճ Ա Ռ

Ա ուշաքի ուսիկանասան սակ

Այս նորաշատատ միւրանոցի մէջ կը գտնուին ամեն տեսակ նպարեղէն, ի մասնաւոր ընտիր ձիւթիւք, աճաւ եւ այլն, որոնք հրապարակի գնեւէն 100 ին 10, 15 աւելի աման կը ծախուին : Ապրանքի մաքրութիւնը եւ գնեւու աճանութիւնը հաստատուող համար կը բաւէ անգամ մը փորձել :

5-1

ԹԻԻԾՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ,	23 Ապրիլ
ԶԱՌԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՑ	
Վազօն	54-59 լիպ. 8-90/10-
Արապա	52-60 լիպ. 8-10/70)
ԱՐԱՎ,	
Վազօն 100 քիւ	8.40, 8.60
Արապա 42-45 լիպ.	4 80 5-0
ԵՌԻՒՍՅ արապա 38/36 լիպ.	4.20/4.80)
Վազօն 100 քիւ	9.80/60-15
ՅԱՍՈՒԼԵԱ	100 քիւ 13/50- 14
Արապա 100 քիւ	12-13
ՏԱՐԸ արապա	57/59 5.80 6.60
ԳՕԼՕՁ արապա	8-80/10-50
ՄԻՍԻՐ Վազօն	6.50-6.60
ՉԱՎՏԱՐ արապա	6.—6.40
« Վազօն	6.10/6.90
Կիւնտէ 30 —40 Վազօն վէ	80-100
արապա կէլմէքտէ վազօն մուսամէսի	
նալթօն 20 քիւ արապա մուսամէսի	
նալթօն 20, 80,	
ՍԱՐԱՅԻԹԷ	
Նարըլէն 20, 65 քիւնք	
Օսմ. լիւսար 22, 85 ալիւն քիւնք	
ՊԱՂԱԼԻԹԷ	
Վարնա բիւցաւընտա պաղպալիլ մալլէրին պու կիւնքի ֆիլալը, ալիւն քիւնք իլէ :	
ԳԱՀՎԷ	1.80/2.—
Շէֆէր նէմցէ	61
Շէֆէր [քէսմէ] սանտրգ	31.80
Բիլիւն ձիւթիլէ չուվալը	39,—
» ճարօն »	38,—
» Ինկիլիկ »	26.—
» Բիդօն »	54 քիւ
ԿԱՁ սանտրը	10.20
ՁԵԹԻՆ Եաղը քիւ	80 — 90
ԵՌԻՒՍԻՐԹԱ 100 առէտ	4.20 — 60
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ	26